

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Կատարի Պետության կառավարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ցանկանալով ամրապնդել իրենց պետությունների միջև բարեկամական և համագործակցային կապերը,

ձգտելով կանոնակարգելու Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի դրույթների կատարման համար իրավասու մարմիններն են.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,
2. Կատարի Պետության կառավարության կողմից՝ Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարությունը:

ՀՈԴՎԱԾ 2

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքագրումը, նրանց մուտքը Կատարի Պետություն և այնտեղ աշխատանքային գործունեությունը իրականացվում են Կողմերի պետություններում գործող օրենքներին, կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացուն կարող են ուղեկցել նրա ընտանիքի անդամները՝ համաձայն Կատարի Պետության ազգային օրենսդրության:

ՀՈԴՎԱԾ 3

1. Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացու աշխատանքային պայմաններն ու ժամկետները՝ ներառյալ աշխատավարձի չափը, սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացու և գործատուի միջև սույն Համաձայնագրին կից հավելվածով նախատեսված տիպային օրինակին համապատասխան կնքվող անհատական աշխատանքային պայմանագրով: Պայմանագիրը ներառում է Պայմանավորվող կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները՝ սույն Համաձայնագրի դրույթներին և Կատարի Պետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

2. Աշխատանքային պայմանագրում նշված աշխատանքային պայմաններն ու ժամկետները չպետք է տարբերվեն աշխատանքի առաջարկի մեջ պարունակվող պայմաններից՝ բացառությամբ աշխատողի համար բարենպաստ փոփոխությունների:

3. Աշխատանքային պայմանագիրը կնքվում է հայերեն, արաբերեն և անգլերեն երեք բնօրինակով, որոնցից մեկը տրվում է գործատուին, երկրորդը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն, իսկ երրորդը՝ ի պահ է հանձնվում Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարությանը:

ՀՈԴՎԱԾ 4

1. Աշխատանքային պայմանագիրը վավերացվում է Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության կողմից:

2. Աշխատանքային պայմանագրի արաբերեն տեքստը միակ վավերացված տարբերակն է, որը ճանաչվում է Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության և Կատարի Պետության դատարանների կողմից:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի նպատակների իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

1. նախաձեռնում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի Կատարի Պետությունում աշխատել ցանկացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար հեշտացվեն բժշկական զննության ընթացակարգերը, անձնագրեր և ուղևորության թույլտվություն ստանալը, և որ այդ քաղաքացիներին տրամադրվեն տեղեկություններ Կատարի Պետությունում աշխատանքային պայմանների, ծախսերի և կենսամակարդակի վերաբերյալ,

2. ապահովում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հավաքագրումը և Կատարի Պետություն մեկնելու նախապատրաստումը համապատասխանեն երկու երկրներում գործող համապատասխան օրենքներին և ընթացակարգերին,

3. ապահովում է, որ Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության հմտություն ունեցող քաղաքացիները ունենան անհրաժեշտ որակավորումներ այն աշխատանքը կատարելու համար, որի համար հավաքագրվել են,

4. ապահովում է, որ մինչև Հայաստանի Հանրապետությունից մեկնելը Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունենան աշխատանքի առաջարկ, որը պատշաճ կերպով ստորագրված կլինի Կատարի Պետության գործատուի կողմից և հաստատված կլինի Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության կողմից,

5. ապահովում է, որ մինչև մեկնելը աշխատողներին տրամադրվի պատշաճ ցուցում/կողմնորոշում աշխատանքի ընդունման հետ կապված համապատասխան օրենքների, կանոնակարգերի, քաղաքականության, ընթացակարգերի, նորմերի,

մշակույթների և գործելակերպի վերաբերյալ՝ Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարության աջակցությամբ և վերջինիս կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա,

6. ապահովում է, որ Կատարի Պետությունում աշխատանքի անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները բավարարեն պայմանագրի կողմ հանդիսացող Կատարի Պետության գործատուի պահանջները և կարիքները,

7. ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները Կատարի Պետություն աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավական պաշտպանությունն ապահովելու համար՝ երկու երկրներում գործող համապատասխան օրենքներին և ընթացակարգերին համաձայն:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի նպատակների իրականացման համար Կատարի Պետության կառավարությունը.

1. ապահովում է, որ Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքի ընդունվելու դիմումներում գործատուի կողմից նշվեն աշխատանքի առանձնահատկությունները, պահանջվող որակավորումները, փորձը և մասնագիտացումը, պայմանագրի հավանական տևողությունը, աշխատանքի պայմանները՝ մանրամասն, մասնավորապես՝ աշխատավարձի չափը, ծառայության ավարտի հավելավճարը, փորձաշրջանը, տրանսպորտի և կեցության հետ կապված պայմանները, ինչպես նաև բոլոր այն հիմնական տեղեկությունները, որոնք կարող են թույլ տալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին աշխատանքային պայմանագիրը ստորագրելու որոշում կայացնել.

2. ապահովում է, որ սույն Համաձայնագրի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Կատարի Պետություն մուտքն ու այնտեղ

աշխատանքային գործունեությունը համապատասխանեն երկու երկրներում գործող համապատասխան օրենքներին և ընթացակարգերին:

3. պաշտպանում է Կատարի Պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքները՝ համաձայն Կատարի Պետության աշխատանքային օրենսդրության:

4. ապահովում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունենան իրենց եկամուտներն իրենց հայեցողությամբ փոխանցելու իրենց պետություն կամ այլ վայր՝ Կատարի Պետության ֆինանսական և համապատասխան այլ կանոնակարգերի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 7

Կողմերից որևէ մեկը չպետք է օգտագործի սույն Համաձայնագրով ձեռք բերված որևէ անձնական տվյալ սույն Համաձայնագրի հետ անհամատեղելի նպատկներով, ինչպես նաև ձեռք բերված տվյալները չի տրամադրի երրորդ կողմին, բացառությամբ այդ տվյալները տրամադրած կողմի նախնական գրավոր համաձայնությունը ստանալուց հետո:

ՀՈԴՎԱԾ 8

1. Գործատուն հոգում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Կատարի Պետությունում գտնվող աշխատավայր տեղափոխվելու բոլոր ճանապարհաձախսերը, երբ նրանք առաջին անգամ են անցնում աշխատանքի, ինչպես նաև աշխատանքն ավարտելուց հետո Կատարի Պետությունից վերադառնալու ճանապարհաձախսերը: Գործատուն հոգում է նաև աշխատանքային պայմանագրով նախատեսված արձակուրդի ընթացքում աշխատողների երկու

ուղղությամբ ճանապարհաձախսը: Նշված ծախսերը չեն ներառում անձնագրի տրամադրման կամ ավանդների վճարման ծախսերը:

2. Գործատուն չի վճարում Հայաստանի Հանրապետության քաղաքացու տուն վերադարձի ծախսերը հետևյալ երկու դեպքերում.

1) եթե քաղաքացին լուծում է աշխատանքային պայմանագիրը մինչև դրա ավարտը.

2) եթե քաղաքացին թույլ է տալիս այնպիսի խախտում, որը պահանջում է աշխատանքից հեռացում առանց նախազգուշացման և առանց ծառայության ավարտի հավելավճարի վճարման՝ համաձայն Կատարի Պետության աշխատանքային օրենքի:

ՀՈԴՎԱԾ 9

Գործատուի և Հայաստանի Հանրապետության քաղաքացու միջև աշխատանքային պայմանագրի հետ կապված վեճի դեպքում բողոքը ներկայացվում է Կատարի Պետության աշխատանքի հարցերով նախարարություն՝ վեճը բարեկամաբար լուծելու համար: Եթե վեճը չի լուծվում բարեկամաբար, այն փոխանցվում է Կատարի Պետության իրավասու դատական մարմիններին:

ՀՈԴՎԱԾ 10

Կատարի Պետության կառավարությունը կարող է ձեռնարկել ընթացակարգեր ցանկացած թվով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ նրանց աշխատանքային պայմանագրի ժամկետի ավարտից հետո հայրենադարձելու համար: Կատարի Պետության կառավարությունը նույն ընթացակարգերը կարող է ձեռնարկել նաև մինչև աշխատանքային պայմանագրերի ժամկետի ավարտն այն դեպքում, երբ դադարում է աշխատանքի անհրաժեշտությունը՝ պայմանով, որ այս վերջին դեպքում

աշխատած ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատավարձերը նրանց վճարվեն, ինչպես նաև ապահովվեն նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերով ձեռք բերված կամ Կատարի Պետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 11

Կատարի Պետության կառավարությունը կարող է ձեռնարկել ընթացակարգեր ցանկացած թվով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հայրենադարձման համար, եթե նրանց ներկայությունը Կատարի Պետությունում հակասում է պետության հանրային շահերին կամ ազգային անվտանգությանը: Այս դրույթը չի վնասում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ աշխատանքային պայմանագրերով ձեռք բերված կամ Կատարի Պետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 12

1. Կողմերի իրավասու մարմիններն սկսում են սույն Համաձայնագրի իրականացման ընթացակարգերը Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

2. Կողմերի իրավասու մարմինները փոխհամաձայնեցված ընթացակարգով փոխանակում են տեղեկություններ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ օրենքների և ընթացակարգերի մասին:

ՀՈԴՎԱԾ 13

1. Սույն Համաձայնագրի իրականացման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ստեղծվում է Կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համատեղ համակարգող հանձնաժողով: Յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները նշանակում են համատեղ համակարգող հանձնաժողովի երեք անդամի:

2. Համատեղ համակարգող հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Կողմերի միջև սույն Համաձայնագրի իրականացման համակարգում և այդ առնչությամբ անհրաժեշտ միջոցների ձեռնարկում,

2) սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանում դրա հետ կապված վեճերի դեպքում և դրա իրականացման ընթացքում ծագած բոլոր դժվարությունների կարգավորում,

3) սույն Համաձայնագրի դրույթները վերանայելու կամ փոփոխելու անհրաժեշտության դեպքում առաջարկությունների ներկայացում:

3. Համատեղ համակարգող հանձնաժողովի հանդիպումները կայանում են առնվազն տարին մեկ անգամ՝ հաջորդաբար Հայաստանի Հանրապետությունում և Կատարի Պետությունում, փոխհամաձայնեցված պայմանների և ժամկետների հիման վրա, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագրով նախատեսված պատվիրակությունների այցելությունների ծախսերը կրելու է ուղարկող Կողմը՝ ազգային օրենսդրության համապատասխան դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը չի ազդում այլ միջազգային պայմանագրերից բխող Կողմերի իրավունքների և պարտավորությունների վրա, որոնց կողմ են իրենց պետությունները:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման ընթացքում Կողմերի միջև առաջացած ցանկացած վեճ լուծվում է Կողմերի իրավասու մարմինների միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, առանձին արձանագրությունների միջոցով, որոնք կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում Համաձայնագրի 18-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 18

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերից մեկի կողմից դիվանագիտական ուղիներով մյուս Կողմից վերջին գրավոր ծանուցումը ստանալու օրվանից, որով Կողմերը միմյանց տեղեկացնում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերն ավարտելու մասին:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է 3 (երեք) տարի ժամկետով, և Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար երկարաձգվում է հետագա միևնույն ժամկետով կամ ժամկետներով, քանի դեռ Կողմերից մեկը գրավոր,

դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին չի ծանուցել Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին դադարեցման օրվանից առնվազն 6 (վեց) ամիս առաջ:

Ի վկայություն վերոգրյալի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում, 2024 թվականի սեպտեմբերի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը նույնական են: Անհամաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**



Նարեկ Մկրտչյան

Աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարար

**ԿԱՏԱՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝**



Դոկտոր Ալի Բին Սամիխ Ալ Մարրի

Աշխատանքի հարցերով նախարար

Հավելված

Աշխատանքային պայմանագիր

Ամսաթիվ/...../....., որը համապատասխանում է...../...../.....

Պայմանագրի ստորագրման վայրը՝.....

Առաջին կողմ՝

Գործատու՝.....

Հասցեն՝.....Գոտի..... Փողոց..... Շենք

Երկրորդ կողմ՝ աշխատող

Աշխատողի անուն ազգանունը.....

Որակավորում՝.....

Ազգությունը՝

Անհատակ ID՝..... Վիզա՝.....

Բնակության վայրը՝..... Գոտի..... Փողոց.....Շենք

Կողմերը սույնով պայմանավորվում են հետևյալ կերպ՝

Երկրորդ կողմն իր մասնագիտության աշխատում է Առաջին կողմի համար

Հիմնական աշխատավարձ՝

Սննդի նպաստ՝

Տրանսպորտային նպաստ՝

Կեցության նպաստ՝

Այլ՝

Ընդհանուր ամսական վճար՝

Աշխատանքը սկսելու ամսաթիվը՝/...../.....

Պայմանագրի ժամկետ

Փորձաշրջան՝ (0) ամիս, Երկրորդ կողմի կողմից աշխատանքի սկզբի օրվանից սկսած

Ճանապարհորդության ծախսեր՝

Առաջին կողմը հոգում է Երկրորդ կողմի Հայաստանի Հանրապետությունից Կատարի Պետություն, ինչպես նաև Հայաստանի Հանրապետություն վերադարձի ճանապարհորդական ծախսերը: Առաջին կողմը հոգում է նաև Երկրորդ կողմի արձակուրդի ընթացքում երկկողմ ուղղությամբ ճանապարհորդության ծախսերը՝ յուրաքանչյուր տարի:

Կեցություն և օրապահիկ՝

Առաջին կողմը Երկրորդ կողմին անվճար տրամադրում է համապատասխան կեցություն՝ հագեցած մահճակալներով և պատշաճ լոգարաններով, նախարարների որոշումներին համաձայն կամ տրամադրում է կեցության նպաստ:

Ճանապարհածախս՝

Առաջին կողմն ապահովում է Երկրորդ կողմի համար հարմարավետ միջոցներով փոխադրումը բնակության վայրից աշխատավայր և վերադարձ բնակության վայր կամ տրամադրում է տրանսպորտային նպաստ:

Արձակուրդ՝

Աշխատակիցը պետք է ունենա պաշտոնական արձակուրդ (երեք օր՝ Eid Al-Fitr կապակցությամբ, երեք օր՝ Eid Al-Adha Ձոհաբերության փառատոնի կապակցությամբ, մեկ օր՝ Ազգային օրվա, և մեկ օր՝ մարզական օրվա համար: Վերջինս նաև կստանա հավելյալ երեք օր արձակուրդ՝ գործատուի որոշմամբ՝ ի լրումն տարեկան արձակուրդի, որը տրվում է ոչ պակաս, քան երեք (3) շաբաթ: Արձակուրդի տևողությունը կլինի չորս (4) շաբաթ, եթե աշխատակցի ծառայության ժամանակահատվածը հինգ տարի և ավելին է՝ համաձայն 72, 78, 79 հոդվածների:

Արձակման նպաստ՝ Կատարի Պետության աշխատանքային օրենքի դրույթներին համապատասխան

Բժշկական օգնություն՝

Առաջին կողմը Երկրորդ կողմին տրամադրում է անհրաժեշտ բուժօգնություն՝ Կատարի Պետության կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան:

Հավաքագրման վճար՝

Երկրորդ կողմը չի կրում հավաքագրման վճարների ծախսերը:

Կատարի Պետության 2004 թվականի թիվ 14 Աշխատանքային օրենքը և դրա կատարման որոշումները հանդիսանում են սույն պայմանագրի դրույթների իրավական հիմքը:

**Agreement
between
the Government of the Republic of Armenia and
the Government of the State of Qatar
on Regulation of Employment of the Citizens of the Republic of Armenia
in the State of Qatar**

The Government of the Republic of Armenia and the Government of the State of Qatar (hereinafter referred to as “the Parties”),

Desiring to strengthen the ties of friendship and cooperation between their States,

Seeking to regulate the employment of citizens of the Republic of Armenia in the State of Qatar,

Have agreed as follows:

Article (1)

The competent authorities for implementation of the provisions of this agreement are:

1. on behalf of the Government of the Republic of Armenia: The Ministry of Labour and Social Affairs of the Republic of Armenia.
2. on behalf of the Government of the State of Qatar: The Ministry of Labour of the State of Qatar.

Article (2)

1. The recruitment, entry and employment of the citizens of the Republic of Armenia in the State of Qatar shall be in accordance with the laws, regulations and procedures applied in the two countries.
2. Citizen of the Republic of Armenia may be accompanied by members of his family in accordance with the legislation of the State of Qatar.

Article (3)

1. The working conditions and terms of employment for a citizen of the Republic of Armenia in the State of Qatar, including the amount of the wage, are determined by an individual employment contract concluded between the citizen of the Republic of Armenia and the employer in accordance with the model contract attached as Annex to this agreement. The contract must include the basic rights and obligations of the two parties to the contract, in accordance with the provisions of this agreement and the labour law of the State of Qatar.

2. The terms and conditions of employment, as stated in the employment contract, shall not differ from those contained in the employment offer except for alterations that are favorable to the worker.

3. The contract shall be written in Armenian, Arabic and English in three original copies, one of which shall be kept by the employer, the second to the citizen of the Republic of Armenia and the third to be deposited with the Ministry of Labour of the State of Qatar.

Article (4)

1. The employment contract shall be authenticated by Ministry of Labour of the State of Qatar.

2. The Arabic text of the employment contract is the only authenticated version recognized by Ministry of Labour and the Courts in the State of Qatar.

Article (5)

For the purpose of this agreement the Government of the Republic of Armenia shall:

1. Initiate of taking of all necessary measures to facilitate medical examination procedures obtaining passports and permission of travel for the citizens of the Republic of Armenia wishing to work in the State of Qatar, as well as providing such citizens with information on the working conditions, costs and standard of living in the State of Qatar.

2. Ensure that the recruitment and preparation for deployment of citizens of the Republic of Armenia to the State of Qatar will be in accordance with relevant laws and procedures applied in the two countries.

3. Ensure that the skilled citizens of the Republic of Armenia to be employed in the State of Qatar have the necessary qualifications, to perform the work for which they are being employed.

4. Ensure that prior to his departure from the Republic of Armenia, the citizens of the Republic of Armenia to be employed to the State of Qatar are in possession of an employment offer duly signed by the employer and approved by Ministry of Labour of the State of Qatar.

5. Ensure that the workers are provided with proper briefing orientation prior to their departure, on relevant laws, regulations, policies, procedures, norms, cultures and practices in relation to their employment with the support and information received from the Ministry of Labour of the State of Qatar.

6. Ensure that the citizens of the Republic of Armenia to be employed in the State of Qatar meet the requirements and needs of their contracted employers in the State of Qatar.

7. Take all necessary measures to provide legal protection to citizens departing to work in the State of Qatar in accordance with the relevant laws and regulations in force in both countries.

Article (6)

For the purpose of this agreement the Government of the State of Qatar shall:

1. Ensure that applications for the employment of citizens of the Republic of Armenia submitted by an employer in the State of Qatar shall indicate the job specifications, required qualifications, experience and specialization, the probable duration of contract, detailed conditions of employment, especially the wages, end of service gratuity, probationary period and facilities regarding transportation and accommodation as well as all basic information that may enable the citizens of the Republic of Armenia to decide on signing the employment contract.

2. Ensure that the entry and employment in the State of Qatar of citizens of the Republic of Armenia according to this Agreement, will be in accordance with the relevant laws and procedures, applied in the two countries.

3. Uphold the rights of citizens of the Republic of Armenia in the State of Qatar in accordance with labour legislation of the State of Qatar.

4. Ensure that citizens of the Republic of Armenia will have the right to remit their incomes to their State of origin or elsewhere at their discretion, in accordance with the financial and other relevant regulations in the State of Qatar.

Article (7)

None of the two party shall use any personal data obtained under this agreement for purposes not compatible with its objectives, as well as shall not provide the data obtained to a third party, except after obtaining prior written consent from the party that provided this data.

Article (8)

1. The employer shall bear all travel expenses of citizens of the Republic of Armenia to the work site in the State of Qatar when they first join work and shall bear their return expenses from the State of Qatar at the end of their employment. The employer shall also bear the citizens of the Republic of Armenia two-way travel expenses during the leave periods provided for in the employment contract. Such expenses shall not cover the cost of passport issuance or payment of any deposits.

2. The employer shall not pay the expenses of the citizen of the Republic of Armenia for returning home in the following two cases:

1) If he resigns before the end of the employment contract;

2) If he commits a mistake that necessitates his dismissal from work without warning and without payment of the end of service gratuity in accordance with the Law of Labour of the State of Qatar.

Article (9)

In case of any dispute between the employer and the citizen of the Republic of Armenia arising from the employment contract, the complaint shall be submitted to the competent department of the Ministry of Labour of the State of Qatar for amicable settlement. If an amicable settlement is not reached, the dispute shall be referred to the competent judicial authorities in the State of Qatar.

Article (10)

The Government of the State of Qatar may take procedures to repatriate any number of citizens of the Republic of Armenia on the expiry of the term specified in their employment contracts. It may also take the same procedures before the expiry of the duration of the contracts when the needs for the employment comes to an end, provided that in this latter case the wages of the citizens of the Republic of Armenia and other rights accruing to them under their contracts of employment concluded with them or under the Law of Labour of the State of Qatar, to be paid to them.

Article (11)

The Government of the State of Qatar may take procedures to repatriate any number of citizens of the Republic of Armenia if their presence in the State of Qatar became contrary to the public interest or the national security of the State. This shall be without prejudice to the rights accruing to the citizens of the Republic of Armenia under the contracts of employment or the Law of Labour of the State of Qatar.

Article (12)

1. The Competent Authorities of the Parties shall start Implementation Procedures of this agreement within six months after its entry into force.
2. The Competent Authorities of the Parties shall exchange information about the laws and procedures on labour relations through a mutually agreed procedure.

Article (13)

1. A joint coordination committee comprising representatives of the Parties shall be set up for the purposes of overseeing the implementation of this Agreement; The Competent Authority of each Party shall nominate three members of this joint committee.

2. The joint committee perform the following functions:

1) Coordinate between the parties to implement this agreement and take the necessary measures in this regard;

2) Interpret the provisions of this agreement in case of any disputes related to it and settle any difficulties arising in its implementation;

3) Propose review or amendment of all or some of the provisions of this agreement if necessary.

3. The joint coordination committee shall meet not less than once a year, alternately in the Republic of Armenia and in the State of Qatar based on mutually agreed conditions and dates, as well as needed.

Article (14)

The costs for visits of delegations under this agreement will be borne by the sending Party and in compliance with the provisions of the respective national legislation.

Article (15)

This agreement shall not affect the rights and obligations of the Parties arising from other international treaties to which their States are parties.

Article (16)

Any disputes arising between the Parties from the implementation of the provisions of this agreement shall be settled through consultations and negotiations between the competent authorities of the Parties.

Article (17)

This agreement may be amended in writing by mutual consent of the Parties, through separate protocols, which shall be its integral part, and enter into force in accordance with the same procedures provided for in art (18) of this agreement.

Article (18)


This Agreement shall enter into force on the date of the receipt by any of the Parties of the last written notification from the other, through diplomatic channels, of completion of all legal procedures necessary for the entry into force of this Agreement.

This Agreement shall remain in force for three (3) years and shall be renewed automatically for further similar period or periods, unless one of the Parties notifies the other, in writing and through diplomatic channels, of its intention to terminate it, at least (6) six months before the date of its termination.

In witness thereof, the undersigned being duly authorized by their respective Governments, have signed this Agreement.

Done in Yerevan on 10 September 2024, in two original copies, each in the Armenian, Arabic, and English languages, all texts being equally authentic. In case of divergences, the English text shall prevail.

**For the Government of the
Republic of Armenia**

A blue ink signature, appearing to be 'Narek Mkrtchyan', written over a horizontal line.

**Narek Mkrtchyan
Minister of Labour and Social Affairs
of the Republic of Armenia**

**For the Government of the
State of Qatar**

A blue ink signature, appearing to be 'Dr. Ali Bin Samikh Al Marri', written over a horizontal line.

**Dr. Ali Bin Samikh Al Marri
Minister of Labour in the State of
Qatar**

Employment Contract

It is on this day _____ corresponding to:

Place of the contract –

First Party:

In his capacity as the Employer –

Whose address is: Zone - , Street - Building No –

Second Party: (The Employee):

Name of the employee: -

Educational qualification: -

Nationality: -

Personal ID No/ the Visa: -

Place of residence Zone -, Street - Building No -

Both parties hereby have agreed to as follows:

Second Party shall work for the First Party in his profession as –

With a basic salary of -

Food allowance -

Transportation allowance -

Accommodation Allowance –

Others –

Total monthly payment -

Date of start working ../../....

Contract term:

Probationary period: (0) month, starting from the date of proceeding work by the Second Party.

Travel expenses:

The First Party shall bear the travel expenses of the Second Party from the Republic of Armenia to the place of work in the State of Qatar as well as its return to the Republic of Armenia. The First Party shall also incur the costs of travel back and forth of the Second Party during the leave period. (Every year).

Accommodation and Daily living:

The First Party shall provide a suitable accommodation free of charge for the employee, equipped with beds, and proper bathrooms as per the ministerial decisions, or give the employee an accommodation allowance.

Transportation:

The First Party shall provide a suitable means of transportation from the residence to place of work and to return the employee to the residence, or give the same a transportation allowance.

Leaves:

Employee shall have an official leave yearly (three days on the occasion of Eid Al-Fitr, three days on the occasion of Eid Al-Adha "Festival of Sacrifice", one day on the National Day Celebration, and one day on the Sport Day). He shall also get a three day leave determined by the Employer, in addition to an annual leave of no less than three (3) weeks. Leave shall be for four (4) weeks if the employee service period was five years and more according to articles (72, 78, 79).

Severance Pay: subject to the provisions of the Qatar Labor Law

Medical Care:

The First Party shall provide the necessary medical treatment to the Second Party by the virtue of the applicable rules and regulations in Qatar.

Recruiting fees

The Second Party shall not bear the costs of recruiting fees.

The Qatari Labor Law No. (14) of the year 2004 and its enforcing decisions shall be deemed the legal basic of this contract provisions.

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024թ. սեպտեմբերի 10-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Կատարի Պետության կառավարության միջև Կատարի պետության տարածքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության կանոնակարգման մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ**



[Signature]
Նելլի Սարոյան